

**ՀԱՅԵՐԵՆԻ ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀՆԱԳՈՒՅՆ
ՎԻՄԱԳՐԱԿԱՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Ս. Ա. ԱՎԱԳՅԱՆ

Հ>Խ ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Որքան էլ հին հայերենում այս բաղաձայնները արտասանության տեղով և եղանակով իրար շատ մոտ են եղել, նրանց նույնացման կամ իրար փոխարեն գործածվելու վկայություններ գտնե հին մատենագրության մեջ չեն հանդիպում և այդ հնչյունները գրաբարի բաղաձայնական համակարգում հանդես են դալիս հիմնական հատկանիշների որոշակի հակադրություններով: Սակայն, արգի մի քանի բարբառներում (Վան, Խոյ, Շատախ, Ն. Զուղա և այլն) բնիկ հայերեն արմատական բառերի հ-ն որոշ դիրքերում պատմական հնչյունափոխության հետևանքով արտասանվում է խ՝ խաց<հաց, խէր<հայր, ջուխակ<ջուհակ, պախուէգ<պահէգ, ակախ<ագահ, ճամբախ<ճամբահ և այլն: Կարևոր է որոշել, թե ե՞րբ առաջացավ այս հնչյունափոխությունը:

Միջին դարերի գրական հուշարձաններում կամ հին ձեռագրերի հիշատակարաններում հ>խ փոփոխությունն արտացոլող վկայություններ չեն պահպանվել, ուստի տվյալ իրողության առաջացման մասին այդ աղբյուրների տվյալներով որոշակի քիչ բան կարելի է ասել:

Կյուրեղ Երուսաղեմացու «Կոչումն ընծայության» երկի հայերեն թարգմանության նորահայտ պատառիկներում, որ ուսումնասիրող Ս. Քոլանջյանի կարծիքով գրչագրված են Թ դարում, ավանդված են ինչպես հ>խ, այնպես էլ հակառակ՝ խ>հ արտասանության օրինակներ, հատկապես բառասկզբի անկախ ու դորեղ դիրքում. ջուրն, որ ի վիմէն խոսեցաւ (<ճոսեցաւ)..., վասն հնամայն (<խնամայն) եւ գթոյն...¹: Ժ դարի մի ձեռագրի հիշատակարանում վկայված է զՇաաահն², տեղանվան Շաաախ արգի արտասանության դիմաց, ըստ որում, դժվար է հավաստիորեն որոշել, թե ինչ փոփոխություն է արձանագրված այստեղ՝ հ>խ, թե՛ խ>հ, քանի որ տեղանունը ստուգաբանված չէ և անհայտ է նրա նախաձևը:

Սակայն, հազիվ թե հնարավոր լինի այս եզակի օրինակներով հավաստել բոլոր դիրքերում հ>խ հնչյունափոխություն, որ կարող էր ներթափանցել այն խոսվածքների արտասանությունից, որոնց ժառանգորդները ներկայումս էլ պահպանում են այդ օրինաչափությունը: Բացի դրանից, հնամայն (<խնամայն) վկայությունը արտացոլում է ոչ թե հ>խ, այլ հակառակ՝ խ>հ անցում, որ նույնպես դիտվում է արդի մի քանի բարբառներում, այսպես, Ղարաբաղի, Լոռու, Ագուլիսի բարբառներում ունենք. հաղօղ (<խաղաղ), հաղ (<խաղ), հա-

¹ Ս. Քոլանջյան, Նորահայտ պատառիկներ Կյուրեղ Երուսաղեմացու Թ դարի մի գրչապրից, «Բանբեր Մատենադարանի», 1960, № 5, էջ 227:

² Տե՛ս Գ. Հովսեփյան, Հիշատակարանը ձեռագրաց, Անթիլիաս, 1951, էջ 182:

դաղ (<խաղաղ), քացան (<քացախ), ծօն (<ծախ), ծանիլ (<ծախել), հնա-
րակ (<հնախարակ), սոն (<սոխ)³:

Նույնիսկ կարծեցյալ Շապուհ Բագրատունու երկում, որ ետ-դասական հա-
յերենի այլ հուշարձանների համեմատ ամենից ավելի է խճողված ժողովրդա-
կան խոսակցական լեզվի՝ գեղջուկ բանի հնչյունական, ձևաբանական իրողու-
թյուններով և աշխարհիկ բառամթերքով, հ>խ փոփոխության վկայություններ
չեն նկատվում:

Այդպիսի հնչյունով բառեր, ըստ որում նաև բառամիջում, գտնում ենք
հնագույնս ԺԴ դ. մեծ մասամբ Վասպուրականի և Վայոց ձորի վանքերում ար-
տագրված ձեռագրերի հիշատակարաններում, ուստի ավելի բնական կլինե-
ր երևույթի ձևավորման ժամանակը համարել այդ դարերը: Ահա հ>խ, խ>հ
գրությունը մի քանի բառեր ԺԴ դ. հիշատակարաններից. ի խալալ (<հալալ)
վաստակոց (վայոց ձոր, 1321 թ.), փրփրագեղ կոխակալ (<կոհակալ) (Ախ-
թամար, 1381 թ.), Նախապետ (<նախապետ) (տեղն անհայտ, 1351 թ.), Ու-
խա (<Ուտհա) (Խիղան, 1395 թ.), գամենայն ազգառախմբն իմ (<ազգառախմբ)
(Արճեշ, 1317 թ.), առնէի զտեսրակս հաղին (<խաղին), հաղտեալս (վաս-
պուրական, 1304) և այլն⁴:

Ժ—ԺԳ դարերի վիժական բնագրերում փորագրված են սակավաթիվ բառեր,
որոնցում հ>խ անցում արձանագրված է ոչ միայն բառասկզբում, այլև բառե-
րի մեջ կամ վերջում: Հնագույն վկայությունը փորագրված է Բյուրականի հին
եկեղեցու հարավային մուտքի վերևում, և մեզ հետաքրքրող մասում հստակ
կարդացվում է. «ՆՂԳ [1044] թուականութեանս հայոց, այս իմ գիր է Զաքարէ
իշխանաց իշխանի, որդոյ Վահրամա, որ ազգաւ Պախալաւ, որ ետու զԲիրա-
կանի զթաստակն...», հետևում են հատուցման և անեծքի ձևակերպումները⁵:

Ակներե է, որ ստույգ վերծանված Պախալաւ—ը Պախալաւ—Պախալաւնի տոհմ-
անունն է, առաջացած պրս. Pahlavi-անունից, ըստ այդմ, տվյալ տառաշար-
քում առկա է մի կողմից դ-ի առաջնալեզվային ձայնորդ արտասանություն, երբ
այն շատ մոտ էր գրաբարյան լ ձայնորդին և դեռևս չէր վերածվել ետնալեզվա-
յին ձայնեղ բաղաձայնի, և ապա հ>խ հնչյունափոխություն՝ Պախալաւ>Պախ-
ալաւ, որ անտարակույս կարող էր ներթափանցել ժամանակի այն խոսվածքնե-
րից, որոնց արդի ժառանգորդները պահպանել են հ>խ արտասանությունը:

Բյուրականի այս կարևոր արձանագրությունը միայն վերջերս է ընդօրի-
նակվել և հայտնի դարձել գիտական շրջաններին. թվում է, հավաստի վերծան-
ված Պախալաւ (<Պախալաւ) հիշատակությունը հնարավոր է դարձնում հ>խ
հնչյունափոխության ժամանակաշրջանը կամ համեմայն դեպս նրա հնագույն
վկայությունը համարել Ժ—ԺԱ դարերից: Նույն անձնանունը անհնչյունափոխ
ձևով փորագրված է նաև Երանոս գյուղում կանգնեցված խաչքարի անթվական,
հավանաբար ուշ շրջանի հիշատակագրում. սբ խաչս բարեխաւս Պախալաւն⁶:

3 Կ. Դավթյան, Լեոնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Երևան, 1966, էջ 70:
Մ. Ասատրյան, Լոռու խոսվածքը, Երևան, 1967, էջ 182: Հր. Աճառյան, Քննություն
Ազուխի բարբառի, էջ 103:

4 ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան,
1950, էջ 23, 130, 170, 501, 578, 611:

5 Բնագրի միակ հրատարակությունը տե՛ս Ե. Տեր-Միլիտյան, Ամբերդաձորի հնու-
թյունները և արձանագրությունները, «Էջմիածին», 1961, № 5, էջ 48:

6 Մ. Սմբատյան, Տեղագիր Գեղարքունի ծովազարդ դավառի, 1895, էջ 607:

Հ> իս փոփոխության մյուս վկայությունները պահպանվել են Արճեշի Հարություն գյուղի եկեղեցու ԺԳ գ. շինարարական-նվիրատվական ընդարձակ արձանագրության մեջ, որի միակ ընդօրինակությունը հրատարակել է Ն. Սարգիսյանը: Ժիշտ է, այս վերծանությունը և տվյալ վկայությունները անստուգելի են, կասկածելի և առայժմ անմատչելի նոր ընթերցումների համար, սակայն նույն հեղինակի մյուս, ստուգելի վերծանությունները (հատկապես Անիի և Բագնայրի վիմագրերի ընդօրինակությունները) կատարված են այդ ժամանակների համար բացառիկ նույնականությամբ, ուստի և հույս են ներշնչում, որ անխաթար պահպանված այս արձանագրության ընթերցումը ևս զգալի վրիպումներ չպետք է ունենա: Ահա հ> իս ունեցող նախադասությունները. յիշես- չիք զպարոն... Սահմագին նախնիք եւ հարազատաւք եւ զխոգեւոր (<զեզեւոր>) հայրն իմ զՄէլէք Ստեփանոս..., ետ Աւարշախն (<Աւտարշտհ>) եւ Մեթարն զիրեանց այգին ի Գողիսն իւր տակ:

Այստեղից, բնական է կարծել, որ Հարություն գյուղի բնակիչները կամ տվյալ բնագիրը կազմողները հոգեւոր, Աւարշախ (շահ, Շահ) բառերը ԺԳ դարում արտասանել են հ> իս անցումով՝ խոգեւոր, շախ, Օւարշախ: Մյուս կողմից, վիմագրերում նկատվում են նաև բառամիջում իս> հ փոփոխությունն արտացոլող վկայություններ. օրինակ, Ախթամարի վանքի 1317 թ. բնագրերից մեկում պարզ կարդացվում է. «Եւ նոյն ամին Գրիգորիսն վաճառեցաւ» (<վախճառեցաւ>): Թեև ընդգծված բայաձևը վկայված է վանի լեզվական միջավայրում, որտեղ օրինաչափ է բոլոր դիրքերում հ> իս անցումը, սակայն հարկվ թե հնարավոր լինի այն դիտել իբրև տվյալ երևույթի արտահայտություն, ավելի հավանական է այստեղ նկատել իս> հ (խաղող> հաղող, հաղուղ, ծախլւ> ծախի), որ, ինչպես տեսանք, տեղի է ունենում մի շարք բարբառներում:

Հավանաբար հ> իս հնչյունափոխությունն է արտացոլված նաև Խաղբակ, Խաղբակեւնք տոհմական մեջ, որ մատենագրական աղբյուրներում վկայված է նաև Հաղբակ, Հաղբակեւնք ձևով, ըստ այսմ, դժվար է ցույց տալ նախաձևը, քանի որ անձնանունը հավաստի չի ստուգաբանվում⁹: Դիտելի է, որ միջին դարերի պատմիչների երկերում անձնանունը մեծ մասամբ Հաղբակ է, իսկ վիմական բնագրերում՝ Խաղբակ, Խաղբակեւնք¹⁰:

Հին հայերենի հ հազագային շփականը իս հնչող արդի բարբառներում տվյալ փոփոխությունը միևնույն օրինաչափությամբ չի գործում. ելնելով ուսումնասիրված բարբառների փաստերից, կարելի է տարբերել հ> իս ունեցող խոսվածքների երկու հիմնական խումբ

ա) Բարբառներ, որոնցում հ> իս արտասանությունն ընդհանրական է և որոշ բացատրելի շեղումներով տեղի է ունենում հ ունեցող միավորներում բոլոր դիրքերում՝ բառասկզբում, բառերի մեջ և վերջում. դրանք են՝ Վանի, Ն. Զուղայի, Շատախի, Խոյի, Մարաղայի բարբառները, որտեղ բառասկզբի դիրքում ունենք՝ խամբել, խայիբ, խառնիս (<համարել, հարիւր, հարսանիք>), խաստ. խալի (<հասա, հայելի>), խիվանդ, խոկյի, խովիվ (հիւանդ, հոգի, հո-

⁷ Ն. Սարգիսյան, Տեղագրությունք ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 268—269:

⁸ И. Орбелн, Избранные труды, Ереван, 1963, էջ 228:

⁹ Տե՛ս Հր. Ահաճյան, Անձնանունների բառարան, հ. Բ, էջ 456:

¹⁰ Տե՛ս Մխիթարայ Այրիվանեցու Պատմութիւն հայոց, Մոսկվա, 1860, էջ 65, Կ. Գանձակեցի, Պատմութիւն հայոց, Երևան, 1961, էջ 394, Գ. Հովսեփյան, Խաղբակյանք..., Ա, էջ 31—40, Գ, էջ 2, 8, 10, 12, 13:

վի), խաշկ, խատնել (<հասկ, հատանել), խամ, խաց, խայ (<համ, հաց, հայ): Բառամիջում դիտվում է՝ շնախավօր, տնօխիւն, ջուխակ, պախել, պախ-
րէզ, պատխան, պատուխաս, բյախանա (<շնորհատր, տնօրհնէք, ջուհակ,
պահել, պահէզ, պատուհան, պատուհաս, քահանա): Վերջապես, բառերի վեր-
ջում. ախ, բախ, մախ, շախ, զրբէխ, ակախ, համբախ (<ան, բան, ման, շան,
զրան. սգան, համբան)¹¹։

բ) Բարբառներ կամ խոսվածքներ, որոնցում <խ արտասանությունը չի
ընդգրկում բոլոր բառերը, ընդհանրական չէ և, հավանաբար, առաջանում է
կամ փոխազդեցական հնչյունափոխությամբ, կամ հարևան ճյուղակից բար-
բառների ազդեցությամբ։ Այս խմբի մեջ մտնում են՝ Մշո, Ագուլիսի, Ղարա-
բաղի, Պոլսի, Համշենի, Մեղրու, Շամախի, Լոռու բարբառները։ Մեղրու բար-
բառում, օրինակ, պրոֆ. էդ. Աղայանը <խ փոփոխությունը դիտում է
բառամիջում, այն էլ միայն բնի հնչյունախմբում, որը այստեղ և մի քանի այլ
խոսվածքներում վերածվում է խն-ի. օխնէլ < օրհնել, ջրօխնէլ < ջրօրհնէլ,
ինչպես նաև խաբփուխ (< հաբբուխ) բառի մեջ, որտեղ <խ արդյունք է վերջ-
նահանգ խ շփական բաղաձայնի առնամանության և դիտվում է նաև Ագուլիսի,
Ղարաբաղի (խաբփուխ), Համշենի (խաբպաղ) բարբառներում¹²։ Պոլսի և Համ-
շենի բարբառներում քննվող հնչյունափոխությունը Հր. Աճառյանը նկատում է
միայն բառակազմում, դժայնեղ բաղաձայնին նախորդելիս, որ նրա կարծիքով
առաջանում է հաջորդ կամ վերջնահանգ դ-ի առնամանումով՝ խօղ. խէօղ
(< հեղ), խավօրք (< հաղորդ)¹³։

Շամախի, Ղարաբաղի, Արարատյան բարբառներում ևս <խ փոփոխու-
թյունը դիտվում է օխնէլ (< օրհնել), խէ, խի (< հի) բառերում. դա, հավա-
նաբար, այլ խոսվածքների ազդեցությամբ պետք է բացատրել։ Առանձնակի է
մնում Մշո բարբառը, որը տվյալ փոփոխությունը պահել է միայն երեք միա-
վորներում՝ խրտ (< հետ), ախ (< ան), դախ (< դան), այստեղ ևս հավանա-
կան ենք համարում հարևան բարբառների (Վան, Շատախ) արտասանության
ազդեցությունը, որոնցում, ինչպես տեսանք, <խ բոլոր դիրքերում ընդհան-
րական է¹⁴։

Նկատի ունենալով Վանի բարբառում <խ հնչյունափոխության ավանդ-
ված օրինակները, մասնավորապես հ-ով սկսվող փոխառյալ բառերում այդ
հնչյունի արտասանությունը, Հր. Աճառյանը տվյալ փոփոխության առաջաց-
ման ժամանակը համարում է արաբական արշավանքից հետո (է—Ը դդ.), բայց
մինչև սելջուկ թուրքերի տիրապետությունը (ԺԱ—ԺԲ դդ.), քանի որ բառասկզբի
առավել անկախ դիրքում <խ պահպանվել է միայն արաբերենից փոխառված
բառերում, մինչդեռ պարսկերենից կամ թուրքերենից ներմուծված միավորնե-
րում փոխառու լեզուների հ-ն բոլոր դիրքերում մնում է անփոփոխ կամ սակավ
դեպքերում ընկնում է իսպառ՝ ենթարկվելով հայերենի հնչյունափոխական

11 Տե՛ս Հր. Աճառյան, Քննություն Ն. Զուլայի բարբառի, Երևան, 1940, էջ 111—112, Քննություն Վանի բարբառի, Երևան, 1959, էջ 65։ Մ. Ասատրյան, Խոյի (Ուրմիայի) բար-
բառը, Երևան, 1962, էջ 53։ Մ. Մուրադյան, Շատախի բարբառը, Երևան, 1962, էջ 50։
Կ. Դավթյան, Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, էջ 71։

12 Էդ. Աղայան, Մեղրու բարբառը, Երևան, 1954, էջ 54։ Հր. Աճառյան, Քննություն
Ագուլիսի բարբառի, էջ 118։ Կ. Դավթյան, նշվ. աշխ., էջ 71։

13 Տե՛ս Հր. Աճառյան, Քննություն Համշենի բարբառի, Երևան, 1947, էջ 51, Քննություն
Պոլսի բարբառի, Երևան, 1940, էջ 53։

14 Տե՛ս Մ. Բաղդասարյան-Թափալցյան, Մշո բարբառը, Երևան, 1958, էջ 66։

օրինաչափություններին. այսպես, օրինակ, խարամ=ապօրինի, արար. *haram*, խասրաթ=կարոտ, արար. *hasrat*, խալալ=օրինական, արար. *halal* (ԺԲ—ԺԳ դդ., վիմագրերում՝ միայն հալալ), խէֆյիմ=քծիշկ, արար. *hakim* (ԺԲ—ԺԳ դդ., վիմագրերում՝ միայն հեֆիմ), ըստ այսմ արաբերենի հ հնչյունը Վանի բարբառում արտասանվում է խ: Մյուս կողմից, հայդուգ=վիթխարի, թուրք. *haydug*, ամարաթ=ժրաջան, թուրք. *hamarat* և այլ բառերում թուրքերենի հ-ն մնում է անփոփոխ կամ իսպառ ընկնում, մի խոսքով չի վերածվում խ-ի¹⁵,

Գր. Մադիստրոսի մի վկայությունը հիմք է տալիս ավելի մոտեցնել միջին հայերին բարբառներում հ>խ հնչյունափոխության ձևավորման ժամանակագրական սահմանները: «Մեկնութիւն Քերականին» աշխատության մեջ խոսելով իր ժամանակի խոսակցական լեզվում հին հայերենի մի շարք բաղաձայնների սարբեր հնչումների մասին, Մադիստրոսը նշում է նկատված տարբերությունները, ըստ այգմ. «ոմանք ի մէնջ ոչ երբեք զձայնակիցս կամ զլծորդս փոխանակեն իբր զմանկանց կամ զպատանեաց, որպէս զխէ փոխանակ հոյի գիտիալք կամ զծա՛ ծայի»։ այստեղից, իմացվում է, որ Մադիստրոսի ժամանակ (ԺԱ դար) և դրանից առաջ էլ հին հայերենի հ-ի փոխարեն որոշ բարբառներ (ոմանք) խ-են արտասանել, իսկ ծ-ի փոխարեն՝ ձ¹⁶:

Այսպիսով, հայերենում հ>խ հնչյունափոխության առաջացման ժամանակը կարելի է համարել Ժ—ԺԱ դարերը, որը հաստատվում է նաև վիմագրական հուշարձաններում պահպանված հնագույն վկայություններով, հատկապես Բյուրականի վերորդայալ արձանագրության օրինակով:

Մ(Ք)>ն(Ք)

Մասնակի առնմանության ազդեցությամբ հին հայերենի բայերի սահմանական ներկայի հոգնակի թվի առաջին դեմքի վերջավորությունը՝ մ(ֆ) միջին հայերենում և արդի բարբառներում վերածվում է ն(ֆ)-ի, այսինքն՝ ետնալեզվային ֆ շնչեղ պայթականի ազդեցությամբ նախորդ մ շրջնային ձայնորդը արտասանության տեղով մոտենում է նրան՝ վերածվելով ն-ի, ըստ այգմ տեղի է ունենում՝ սիրեմֆ>սիրենֆ, աղամֆ>աղանֆ, հեղումֆ>հեղունֆ և այլն: Հավանաբար, սվլյալ հնչյունափոխության մեջ որոշակի դեր է խաղացել նաև նույն ժամանակի III դեմքի բայաձևում ն-ի (գրեն, կարդան) ձևաբանական առնմանությունը՝ գրեմֆ-գրէֆ-գրենն-գրեննֆ:

Մ(ֆ)>ն(ֆ) հնչյունափոխության առաջացման ժամանակաշրջանը ստույգ որոշված չէ, հարցի քննությանը զբաղվող հայագետները սվլյալ փոփոխության ժամանակը որոշելիս սովորաբար հիմք են ընդունում մատենագրության մեջ ավանդված հնագույն վկայությունները, ըստ այսմ, Յ. Կարստը, Հր. Աճառյանը դրանք նկատել են նախ Մխիթար Հերացու «Ջերմանց մխիթարություն» բժշկարանում (1184 թ.)՝ ենֆ (<եմֆ), կանֆ, կամիեֆ, յիշենֆ, տանֆ, տեսանենֆ, իսկ հետագայում, ավելի սակավ՝ նաև ժամանակի գրաբար երկերում, օրինակ, Վարդան Արևելցու «Պատմության» մեջ (ԺԳ դ.)՝ ենֆ, շենֆ, չգիտենֆ,

¹⁵ Տե՛ս Հր. Աճառյան, Քննություն Վանի բարբառի, էջ 66—67:

¹⁶ Տե՛ս Н. Адонц, Дионисий Фракский и армянские толкователи, Петроград, 1915, էջ 224; Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. Բ., Երևան, 1951, էջ 383:

ուզենք և այլն¹⁷։ Սակայն, հաղիվ թե հնարավոր լինի թվարկված բայաձևերում $\text{մ}(\text{f}) > \text{ն}(\text{f})$ արտասանությունը աներկբա վերագրել Հերացուն կամ Վարդանին, քանի որ նրանց երկերը մեզ են հասել ավելի ուշ շրջանի արտագրություններով, որոնցում անխուսափելի էին հտնագրության ընդմիջարկություններն ու սրբագրումները։

Շապուհ Բագրատունու անունով հրատարակված «Պատմություն» մեջ ավանդված են տաճ մ ֆ, մեճ մ ֆ, սակայն այստեղ ևս վկայությունների ժամանակի անորոշության պատճառով զգուշանում ենք դրանք համարել հնագույնը¹⁸։

Մի բան ակնհերե է, որ թե՛ միջին հայերենում և թե՛ վկայված ժամանակի գրաբարով հորինված երկերում $\text{մ}(\text{f}) > \text{ն}(\text{f})$ հնչյունափոխությունը կարող էր առաջանալ խոսակցական լեզվի, միջին հայերեն բարբառների արտասանության ազդեցությամբ։

Վիժական բնագրերում և հին ձեռագրերում պահպանված վկայությունները հնարավորություն են տալիս ավելի ստույգ որոշել $\text{մ}(\text{f}) > \text{ն}(\text{f})$ հնչյունափոխության առաջացման սկիզբը կամ համեմայն դեպս այդ բայաձևերի նախնական հիշատակությունների ժամանակը։ Մեզ հայտնի հնագույն վկայությունը գտնում ենք լազարյան ճեմարանի ՅԼԶ (887) թ. ավետարանի հիշատակարանում, որտեղ պարզ գրագրված է. «Կատարենք ($\text{<կատարենք}\text{>}$) ուխտ առ ան շնորհի սբ Ածայծնին եւ ի մարդկանէ...»¹⁹։

Վիժագրական հուշարձաններում $\text{մ}(\text{f}) > \text{ն}(\text{f})$ հնչյունափոխությամբ բայաձևերից հնագույնը պետք է համարել Հաղրատի վանքի ՇԺԶ (1067) թ. նվիրագրում փորագրվածը. «Յամենայն եկեղեցիքս ժամ առնենք ($\text{<առնենք}\text{>}$)..., իւր ծնողացն առնենք», կամ մոտավորապես նույն ժամանակներում փորագրված թագավորական արտոնագրի հատուցման բանաձևում. «Յամենայն եկեղեցիքս ժամ նմա առնենք»²⁰։ Դրանից մի քանի տասնամյակ առաջ, Խժկոնքի ՆԶ (1031) թ. տապանագրում վկայված է. «Որ կանք ($\text{<կանք}\text{>}$) ի թաղման»²¹։ սակայն բնագրի միակ վերծանությունն անստուգելի լինելու պատճառով զգուշանում ենք տվյալ վկայությունը քննվող հնչյունափոխության հնագույն հիշատակությունը համարել։

ԺԲ—ԺԳ դարերի վիժական բնագրերում $\text{մ}(\text{f}) > \text{ն}(\text{f})$ փոփոխությունն արտացոլող բայաձևերի հիշատակությունները հաճախանում են, թեև գրաբարյան կանոնավոր մֆ վերջավորությունը դեռևս գերակշռող է։ Ահա մի քանի օրինակներ այդ դարերից. «Տվինք տարումն Գ։ աւր պատարագ» (Արցախ, Հավապտուկի վանք, ԺԲ դ.)²², վկայ ենք (Անի, 1211 թ.)²³, կենդանի ենք (Հովհաննավանք, 1250 թ., Հաղրատ, 1242 թ., Հոռոմոս, 1245 թ., Սաղմոսավանք,

¹⁷ Տե՛ս J. Karst, Historische Grammatik des Kilikisch-Armenischen, Strassburg, 1901, էջ 102, 309; Հր. Ահառյան, Լիակատար քերականություն..., հ. 4, Ա, էջ 402, 403։

¹⁸ Տե՛ս «Պատմություն Շապուհ Բագրատունու», էջմիսծին, 1921, էջ 38, 56։

¹⁹ «Աւետարան ըստ Թարգմանութեան նախնեաց մերոց», Մոսկվա, 1899, էջ 110, Գ. Հովհաննիսյան, Հիշատակարանք ձեռագրաց, Անթիլիաս, 1951, էջ 85։

²⁰ Կ. Ղաֆազարյան, Հաղրատ, Երևան, 1963, էջ 156, 157։

²¹ Կրպե, Խժկոնք, «Ազգագրական հանգես», գիրք Ա, 1895, էջ 41—50։

²² Գ. Հովհաննիսյան, Խաղարկյանք կամ Պոռոջանք հայոց պատմության մեջ, մասն Ա, Վաղարշապատ, 1928, էջ 30։

²³ Հ. Օրբելի, Դիվան հայ վիժագրության, պր. 1, Երևան, 1966, էջ 61։

1241 թ.)²⁴, կանկնեցիւն գիւալս (Գեղարքունիք, Ակունք, ԺԳ դ., Սյունիք, Հալիձոր, ԺԳ դ., Խոտ, ԺԳ դ., Վայոց ձոր, Ամաղու, ԺԳ դ.)²⁵, միյաբանեցանք... (Հովհաննավանք, ԺԳ), հաստատեցիւն (Ձորագետ, Խորանաշատ, 1243 թ.) և այլն²⁶,

Թվարկված վկայությունները հնարավոր են դարձնում I դեմքի հոգնակի թվի բայաձևերում մ(f) > ն(f) հնչյունափոխության առաջին արտահայտությունները համարել Թ—Ժ դարերից, իսկ երևույթի տարածվելը և ընդհանրական օրինաչափության վերածվելը՝ հետագա ԺԳ—ԺԴ դարերում:

Հայերենագիտության մեջ այն համոզումն է հաստատված, որ հին հայերենի մեջ դերանվան մեջ ն ձայնորդի հավելումը և մեկ գերակշիռ ձևի առաջացումը տեղի է ունեցել քննության առարկա ն(f) վերջավորությամբ I դեմքի, ինչպես նաև հոգնակի III դեմքի (գրեմ, կարլան, հեղուն) բայաձևերի ձևաբանական առնմանությամբ՝ սիրեմ մեք > սիրեմ մեմք ընթացքով:

Յ. Կարստը մեմք-ի մեջ սոսկ ն ձայնորդի հավելում գիտելով, չի պարզում այդ փոփոխության պատճառները: Հիմք ընդունելով Հերացու բժշկարանում և կիլիկյան գրական հայերենով շարադրված մյուս գրվածքներում ավանդված օրինակները, Կարստը մեմք < մեմք առաջացման ժամանակը համարում է ԺԹ—ԺԳ դդ.²⁷, վիժագրության մեջ մեմք-ի վկայությունները այնքան էլ հաճախ չեն, ինչպես նեմ-ով բայաձևերինը: Միակ հիշատակությունը փորագրված է Հաղբատի վանքի ԶԺԱ (1262 թ.) նվիրագրում, որը ըստ պրոֆ. Կ. Ղաֆադարյանի վերծանության կարդացվում է. «Կեղանի եմք, զոր ած տա, այլ մեմք արդինս»²⁸,

ՆՈՔԱ > ՆԱՔԱ (ՆՈՅԱ > ՆԱՅԱ, ՍՈՅԱ > ՍԱՅԱ)

Այս ձևերում արտացոլված հնչյունափոխությունը, որ առաջանում է վերջնահանգ ա ձայնավորի ետընթաց լիակատար առնմանությամբ, գրաբարի բոլոր շրջանների հուշարձաններում չի ավանդված և, անշուշտ, կարող էր տեղի ունենալ վկայված ժամանակաշրջանի բարբառային արտասանության ազդեցությամբ: Ե՞րբ և ո՞ր շրջապատում առաջացավ այդ փոփոխությունը:

Դերանունների անփոփոխ կամ թեքված ձևերում ա > յ հնչյունափոխության գրական մի քանի արտահայտությունները 1464 թ. մի ձեռագրի հիշատակարանում առաջին անգամ նկատել է դեռևս Ա. Այտընյանը, դրանք համարելով լեհահայերի բարբառի հնագույն նմուշներ. ահա այդ ձևերը. «Նացայ հալաւ շինեմ ու զնաբայ կերակրեմ..., ես կուզեմ զան ին սոմ սպ. նացայ տամ»²⁹,

²⁴ Կ. Ղաֆադարյան, Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1948, էջ 103, Հաղբատ, էջ 178; Ն. Սարգիսյան, Տեղագրություն..., էջ 150:

Սաղմոսավանքի վկայությունը առնում ենք մեր հավաքածուից:

²⁵ Ս. Բարխուդարյան, Դիվան, պր. 2, 1960, էջ 53, 62, պր. 3, էջ 125:

²⁶ Կ. Ղաֆադարյան, Հովհաննավանք..., էջ 108, Պատմահնագիտական դիտություններ Նոր-Քերդի Կյուրիկյան իշխանության մասին, «Տեղեկագիր» ԳԱ հայկական ֆիլիալի, Երևան, 1940, № 4—5, էջ 177:

²⁷ Տե՛ս J. Karst, Historische Grammatik..., էջ 104, 225:

²⁸ Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 212:

²⁹ Տե՛ս Ա. Այտընյան, Քննական քերականություն..., Վիեննա, 1866, էջ 192—193:

նույն իրողությունը հունգարահայերի և մոլդավահայերի խոսվածքներում դիտում է նաև պրոֆ. Մ. Բիտները՝ այդ հարցին նվիրված հատուկ ուսումնասիրության մեջ՝ սա, սեռ. սարալ(=սորա), սոֆա=սաֆալ, սոցա=սացալ և այլն³⁰:

Կիլիկյան միջին հայերենի գրական հուշարձաններում նա-նարա-նարա-մէն, նաֆա-զնաֆա, նացա-ի նացմէ (նաֆա-նացմէ) դերանվանական ուրույն հոլովումը ներկայացնում է Յ. Կարստը, դասական հայերենից շեղվող հիշյալ ձևերը նկատելով իբրև ո>ա հնչյունափոխության արդյունք, որ նույնությամբ պահպանվել են նաև Ղրիմի և Ն. Նախիջևանի հայերի խոսակցական լեզվում: Հր. Աճառյանը Առտիալի բարբառում հիշյալ հնչյունափոխված դերանուններից նկատում է միայն՝ դարա (=դորա), նարա, դացա (=դոցա), նացա, դարամէ, նարամէ, դացամէ, նացամէ (=ի նոցանէ, ի նորանէ) ձևերը³¹:

Սակայն քննվող ո>ա փոփոխության հնագույն և հավաստի վկայությունները գտնում ենք ԺԲ—ԺԳ դարերի վիժական բնագրերում, որոնք փորագրված են բացառապես միջնադարյան Հայաստանի արևելյան և հյուսիսային գավառների հուշարձանների որմերին, ըստ այսմ, արտացոլում են այդ շրջանների խոսվածքների հնչյունական օրինաչափությունները:

Ներկայացնում ենք ո>ա առնմանությամբ դերանունները վիժական բնագրերում: Նոցա>նացա, հնագույն վկայությունը կարդացվում է Սանահնի վանքի 1191 թ. նվիրագրում. «Գրեցաք զՀամբարձումն արս զամէն եկեղեցիք. նացա ժամն..., եւ զաւուրս հացն ի նացա անուն զսեղանիս»³², Ն. Վարաք վանքում, 1198 թ. «Ով խափանէ, նացան մեղացն տէր է», Մղարթի խաչարձանի հիշատակագրում, 1201 թ. «Ի նացա պակասմանն տուաք ի Սանահինն նացա հոգոյն զԱրլասադանց»³³, Վայոց ձորի Թանատի վանքում, ԺԳ դ. «Տվի... նացան հայրենիք...», Արատեսի վանքում, 1251 թ. «Ած ողորմի նացան»³⁴, Սանահնի վանքում, ԺԳ դ. «Նացա այլ գրին յետ եւ Քուրդաշահին հոգոյն»³⁵, Կայենո գավառի Հաղարծին վանքում, ԺԳ դ. «Նացան մեղացն տր է»³⁶, պատմական Սողք գավառի Տաշքենդի եկեղեցու արտոնագրում, ԺԳ դ. «Ով իցէ յետ առու կամ ի նացանէ արգան առու, ՅԺԸ: հայրապետացն կապած է»³⁷: Դիտելի է, որ նացա դերանունը Հաղարծնի, Ն. Վարաքի, Թանատի, Արատեսի բնագրերում կիրառված է ն որոշիչ հոգով (նացան), հավանաբար Ժ—ԺԳ դարերի վիժագրության մեջ արտացոլված այն օրինաչափությամբ, ըստ որի սեռ. հոլովով նախադաս հատկացուցիչները կարող են ընդունել ն որոշիչ հոգ (հմմտ. տուաք զՄուսէս՝ Մարգարէին ուղիւն—Սանահին ԺԳ, «Որ կոռին հոգն բանեցնէ», Ն. տ., «Ես՝ Սոփի, Դերանկին դուստր» — Գնդեվանք 930 թ.,

³⁰ Տե՛ս M. Bittner, Einige Kuriose dem Armenischen Dialekte der Walachen und der Moldau, «Հուշարձան» գրական ժողովածու, Վիեննա, 1911, էջ 365:

³¹ Տե՛ս Հր. Աճառյան, Քննություն Առտիալի բարբառի, Երևան, 1953, էջ 155:

³² Տե՛ս Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանք..., Երևան, 1957, էջ 106:

³³ Առնում ենք մեր հավաքածուից:

³⁴ Տե՛ս Ս. Բարխուդարյան, Դիվան, պր. 3, Երևան, 1967, էջ 82, 123: Արատեսի բնագրի նացան սխալմամբ դիտված է անձնանուն:

³⁵ Տե՛ս Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանք..., էջ 123:

³⁶ Առնում ենք մեր հավաքածուից:

³⁷ Տե՛ս Ս. Բարխուդարյան, Դիտողություններ և նոր նյութեր հին Հայաստանի ուղղագ-

«էզնեցի զԼուսեցի զայգին» — *Ներքավան Զն*, «Ջալալին հրամանաւ» — *Մեծարանց Զ. և այլն*)³⁸,

Սոցա>սացա, հնագույն հիշատակութիւնը գտնում ենք Դսեղի Բարձրաբաշ մենաստանի ՈԶԸ—1239 թ. նվիրագրում. «Ընկալա զսացա յոյսն», նաև Լոռում, Մղարթ գյուղում կանգնեցված խաչքարի ՈՄ—1201 թ. հիշատակագրում. «Որ մարդ ի սացա դուռն չգա»³⁹,

Նոֆա>նաֆա, եզակի վկայութիւնը փորագրված է Վայոց ձորի Թանատ հուշարձանի ԺԳ դ. նվիրագրի հատուցման ձևակերպման մեջ. «Նաֆան տվին ինձ իմ ար իմ խորան»⁴⁰,

Դերանուններում ո>ա (նոցա>նացա, նոֆա>նաֆա, սոցա>սացա) հնչյունափոխութիւնն արտացոլող վկայութիւնները ցույց են տալիս, որ իրողութիւնը առաջանալով ԺԲ գրում, լայն տարածում է ունեցել հատկապես Հայաստանի հյուսիսային և արևելյան գավառների խոսվածքներում, որտեղից հետագա դարերում անցել է նաև մյուս գավառները և այժմ էլ դիտվում է Առտիալի և Ն. Նախիջևանի բարբառներում:

О НЕКОТОРЫХ ЯВЛЕНИЯХ ИСТОРИЧЕСКОЙ ФОНЕТИКИ АРМЯНСКОГО ЯЗЫКА В ЭПИГРАФИЧЕСКИХ ТЕКСТАХ

С. А. АВАКЯН

Р е з ю м е

Хронология возникновения многих явлений исторической фонетики армянского языка не всегда поддается точному определению, ибо письменные памятники грабара в их современной публикации не обнаруживают сколько-нибудь значительных диалектных отклонений от древнеармянской звуковой системы.

В статье на основании идентично дешифрованных эпиграфических текстов устанавливается хронология некоторых изменений в звуковой системе грабара (ն>խ, մ(f)>ն(f), նոֆա>նաֆա, սոցա>սացա и т. д.). Эти явления засвидетельствованы лишь в армянской средневековой эпиграфике, памятных записях древних рукописей и частично в современных армянских диалектах.

ման գործի վերաբերյալ, Նյութեր Հայաստանի գյուղատնտեսության և գյուղացիության պատմության, Երևան, 1964, էջ 267—270:

38 Տե՛ս Կ. Ղ ա ֆ ա դ ա ղ յ ա ն, Սանահնի վանքը..., էջ 123: Ս. Բ ա ռ խ ու դ ա ղ յ ա ն, Դիվան, պր. 3, էջ 13: Խ. Դ ա դ յ ա ն, Մեծարանց վանքի արձանագրությունները... «Բանասեր», 1901, էջ 139: Ներքավանի բնագիրը անտիպ է, առնում ենք մեր հավաքածուից:

39 Առնում ենք մեր հավաքածուից:

40 Ս. Բ ա ռ խ ու դ ա ղ յ ա ն, Դիվան, պր. 3, էջ 82: